ընթացակարգ բխում է Պատվիրատուի համապատասխան կարիքներից և ուղղված է այդ կարիքների բավարարմանն, որպիսի պայմաններում տվյալ ընթացակարգի գնման առարկայի, հրավերի կամ այլ հատկանիշների իրավաչափությունը կարող է ստուգման առարկա դարձվել բացառապես տվյալ գնման ընթացակարգին վերաբերելի նյութերով:

Հիմք ընդունելով վերոգրյալ պատճառաբանությունը՝ Դատարանը գտնում է, որ «Հելիոն» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման ընթացակարգն ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, անհիմն է և ենթակա է մերժման:

-

<u>6. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Դատարանը, հիմք ընդունելով սույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2026 թվականի որոշումն, արձանագրում է, որ սույն գործով Հայցվորի կողմից նախապես վճարվել հայցադիմումի ներկայացման համար անհրաժեշտ պետական տուրքի գումարը և հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Հելիոն» ՍՊԸ-ի ընդդեմ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման ընթացակարգն ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի

հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE03-9D53-4C9E-A6B6 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am